ՆԱԽԱԳԻԾ 31

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«_____» «_____» 2015 թվականի N _____- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի խորքային հորերից ոռոգման պոմպերով օգտագործված էլեկտրաէներգիայի արժեքը փոխհատուցելու նպատակով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 2015 թվականի ինն ամսում հատկացնել 4,440.0 հազար դրամ գումար (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով):

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման N 11-րդ հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքի խորքային հորերից

ոռոգման պոմպերով 2014 և 2015 թվականների ընթացքում օգտագործված էլեկտրաէներգիայի, ոռոգվող հողատարածքների, մշակաբույսերի, ինչպես նաև ոռոգման ջրի ծավալների մասին տեղեկատվություն:

4. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին հատկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի կողմից ներկայացված հիմքերը հիմնավոր ճանաչվելու դեպքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
-ի N -Ն որոշման

Աղյուսակ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.56 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԸ

ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները

1.2. Տրանսֆերտներ

Չափորոշիչներ		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)			
		Ոչ ֆինանսական ցուցանիշներ		Ֆինանսական ցուցանիշներ	
		Ինն ամիս	Տարի	Ինն ամիս	Տարի
Ծրագրային դասիչը		*Անվանումը* Աջակցություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքին			
1035	ԾՏ17	*Նկարագրություն՝* Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի խորքային հորերից ոռոգման պոմպերով օգտագործված էլեկտրաէներգիայի արժեքի փոխհատուցման նպատակով անհրաժեշտություն է առաջացել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 2015 թվականի ինն ամսում հատկացնել 4,440.0 հազար դրամ գումար:			

Շահառուների քանակը	1. Տրանսֆերտ ստացող անձանց քանակը	1	1		
Գումարը (հազար դրամ)		X	X	4,440.0	4,440.0
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը					
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1035 Օրենսդրությամբ (օրենքներով և կառավարության որոշումներում) նախատեսված օժանդակություն և փոխհատուցումներ					
Վերջնական արդյունքի նկարագրությունը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի խորքային հորերից ոռոգման պոմպերով օգտագործված էլեկտրաէներգիայի արժեքի փոխհատուցում					

Աղյուսակ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԸ

ՀՀ Արմավիրի մարզպետարան

Բաժին 2.

Գերատեսչության կողմից իրականացվող քաղաքականության միջոցառումների ծրագրային խմբավորումը

Ծրագրային դասիչը		Գործառնական դասիչը	Ծրագիրը/ քաղաքականության միջոցառումը	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)
				ՀՀ 2015թ. պետական բյուջե
Ծրագիրը	Միջոցառումը	(Բաժին/Խումբ/ Դաս)		(հազար դրամ)
1035			ԾՐԱԳԻՐ	
			Օրենսդրությամբ (օրենքներով և կառավարության որոշումներում) նախատեսված օժանդակություն և փոխհատուցումներ	4,440.0
			Ծրագրի նկարագրությունը	
			Օրենսդրությամբ (օրենքներով և կառավարության որոշումներում) նախատեսված օժանդակություն և փոխհատուցումներ ՏԻՄ-երին	
			Վերջնական արդյունքի նկարագրությունը	

			Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի խորքային հորերից ոռոգման պոմպերով օգտագործված էլեկտրաէներգիայի արժեքի փոխհատուցում	
			Քաղաքականության միջոցառումներ. Տրանսֆերտներ	
	ԾS17		Աջակցություն Արմավիր համայնքին (ՀՀ Արմավիր մարզպետարան)	4,440.0
			Ֆինանսավորման ծախսի նկարագրությունը	
			Արմավիր համայնքի խորքային հորերից ոռոգման պոմպերով օգտագործված էլեկտրաէներգիայի արժեքի փոխհատուցման նպատակով	

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Անհրաժեշտությունը

Նախագծի անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի խորքային հորերից ոռոգման պոմպերով օգտագործված էլեկտրաէներգիայի արժեքի փոխհատուցմամբ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի խորքային հորերից ոռոգման պոմպերով օգտագործված էլեկտրաէներգիայի արժեքը փոխհատուցելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 2015 թվականի ինն ամսում հատկացնել 4,440.0 հազար դրամ գումար (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով):

3. Կարգավորման նպատակը և բնույթը

Կարգավորման նպատակն է փոխհատուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի խորքային հորերից ոռոգման պոմպերով օգտագործված էլեկտրաէներգիայի արժեքը:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Նախագծի մշակումը իրականացրել է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը:

Նախարար Ա. Երիցյան

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի նախագծերը կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և /կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Իրավական ակտն ընդունելու կապակցությամբ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն սպասվում:

Նախարար Ա. Երիցյան